

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

34924

ԱՐԵՎԱԿ ՇԱՀԱՆՉԱՐ ՅԱՆԱԿԵՐ



ԱՐՁԱԿ ՀԱՀԱԶԱՐՅԱՆ



# ՀԱՅԱՍ-ԿԱԹՈՒԱԿԵՐ ԱԴՋԻԿԵ

(ԿԵՆՑԱՐԱՊՈԵՄ)

A 8544 15410



ՀԱՐԱՄ - ԿԱԹՆԱԿԵՐ ԱՂՋԻԿԸ

I.

Գարուն ե, գարուն,  
Աննման սիրուն...

Յերկիրն՝ արթնացած ծանր մրափից,  
Սարը շպրտեց պատանն սպիտակ,  
Յերկինքը՝ թնդաց ամպերի ծափից  
Յեվ արևն անուշ ժաղտում ե տաք-տաք:  
Դաշտը պճնվեց թափիշ կանաչով,  
Ծառները նաշխուն պատմուճան հազան.  
Ու հազար ծաղկունք թարթում են աչով,  
Յանելով շուրջը բույր եղեմական:

Ծիրանու տակին, արևկող լանջում  
Մի ջահել գեղջուկ կեսփոր մարգի մոտ  
Հանգստի ժամին ծաղիկ ե փնջում  
Ու հետը յերգում տաղ սիրակարոտ,  
Խնդում են շուրջը այգի ու արոտ...  
Ճնճղուկն ե վառվում տանձենու ծայրին

Կաքավը խոսում դիմացի ժայռին,  
Բնությունն համայն սիրով ե շնչում,  
Զիվան սրտերին սեր ե շանջում:

Շողերն յեկել եր այգին բանջարի.  
Դե ապրուստն եղ ե աղքատ-անճարի,  
Գարունը բացվեց՝ կանաչ-աղցանով  
Փորը կը խաբեն որը մի բանով:

Հայրը խեղճ մարդ եր, հասակը առած,  
Հալումաշ ելած, թել-դերձան դառած:  
Բա, հանաք բան չի, վոր քառսուն տարի  
Քարի հետ քաղվես,  
Հողի հետ մաղվես,  
Աչք տնկես, թե զա մի որ ու բարի...

Աստծու տունը շեն, տղա յել չուներ,  
Վոր ծեր հոր մեջքին հարեհաս լիներ:

Միշտ ձախ ե ելի աղքատի բանը.  
Չորս հատ աղջիկ են բուսել մի կարգի,  
Չորս սիրուն պատկեր շարվել են տանը  
Պոռնկ-պոռնկի, հին աղաթ-վարքի:  
Ելած-չելածը նրանց վողջ կայքի  
Մի սև խրճիթ եր, քսան թումբ այգի,  
Վորտեղ տնովի հա տարին-բոլոր—  
Տլրփում եյին, իրանց քրքրում,

Բայց վերջը սոված մնում ին մոլոր.  
«Ճանձը ածում եր ու ճիճուն՝ կրում»: <sup>1)</sup>

Պարտք կար պապական Ավետի ուսին,  
Խեղճը տրորված սասում սարի աակ,  
Ելած մասիլը կ'տար տոկոսին,  
Ինքը կ'մնար վիզը ծուռ, դարդակ:  
Դե վեց բերան ին, հայրը միշտ տկար.  
Դրսից աշխատանք բերող հո չկար,  
Են ա խեղճ կինն եր, հացթուխ Մարանը,  
Որական սրա նրա դռանը  
Հազար մի ջանքով,  
Դառը տանջանքով,  
Մի տուն յերեխեն պահում, հազցնում.  
Չոռով եր ծայրը ծայրին հասցնում:

Շողերը մեծն եր, անդրանիկը մոր,  
Մի փաշա-դրոշա, մի նախշուն խնձոր,  
Տասնութ տարեկան մի հուրի-փերի,  
Հազարում ընտրած, հոր կամքին գերի...

Աղջիկը սկի չիմացավ ինքը,  
Թե են վոնց ելավ, վոր ջոկվեց խմբից:  
Նո նստեց ափում. զոգնոցը լիքը

---

<sup>1)</sup> Աշխատանքի անդյունքը ուրիշներն եյին  
վայելում

Բանջար եր պես-պես սիրելս ու աղցանւ  
Աչքը բարձրացավ, թեքվեց վինքը,  
Գլոխման անծանոթ, խամ մտքեր անցան:  
«Կաքավս ինչու ա մղկտում քարին,  
Խնչու ճնճղուկը ծըլվլում բարձր,  
Են վոր ջահելն ա կանչում իր յարին,  
Ախ, ինչ լավ տաղ ա, անուշ ու քաղցը»  
Ու մատաղ սիրտը թրթռաց տրագ,  
Աղջիկն հառաջեց յերկար ու բարակ:  
Սառը քրտինքը պատել եր կուսին.  
Նա յելավ վոտքի բանջարը ուսին:

Պետք եր տուն գնալ: Բայց... են տաղն  
անուշ,  
Մըմունջն են սիրո, ծաղկունքի հոտը...  
Շողերն արբել ե, նա թուլիկ, անուժ,  
Ուզում ե դառնալ՝ չի անում վոտը:  
«Բոյ յես քաշել չինարի,  
Արի, յարո ջան, արի,  
Բոլ ա կարոտով մաշես,  
Ինձ վառել ես հինգ ասրի...»

Զայնը ծանոթ եր. Համբոն եր Բոշի,  
Չին խաղընկերը, մի աստղով ջահել.  
Վորին թփերում են ձորաբաշի  
Աղբյուրից գալիս շատ եր պատահել,

Տաղեր կանչելիս, մենակ ու մոլոր,  
Աչքը՝ իր ճամփին, հայացքը՝ ոլոր:

Զգում ե մի բան դեպի են կողմը,  
Վուները դանդաղ ձենին են գնում,  
Հրում ե կասեր թիկունքից հողմը,  
Շողերի սիրտը հալվում ե բնում...

Ահա նա անցավ ափը հարեվան:  
«Աման, չլինի մարդ—մուրդ յերեան»  
Չե, չե կանաչն ե, ծաղկունքն ու սերը...  
Աղջիկն հավաքեց վերջին սւժերը,  
Մատերի ծայրով մոտեցավ տղին,  
Վորը՝ անձնատուր սիրածի տաղին,  
Բարձր մըմնջում,  
Յարին եր կանչում:

Շողերը մեղմիվ, թիկունքից սողաց,  
Կանգ առավ մի պահ, չոքեց ու դողաց,  
Յեվ մեկ ել հանկարծ ցնցվեց, թափ առավ  
Ու հալվող յերգչի աչքերը կալավ:

Տաղն իսկույն մարեց.  
Համբոն շիվարեց,  
Յեվ ապա փորձեց գուշակել մեկեն՝  
— Կարո ջան, չելավ, չեն գա քամակեն,  
Թե՛ Սոքոն ես դու...  
Մի ձեռդ դես տու. —

Տղեն շոշափեց կակուղ մտաները.  
— կին ա, Տեր Աստված,  
Զինի Յեսթերը...  
Դե լավ, Տալոն յես... մորքուրս՝ Թամամ...  
Քեռուս աղջիկը... Հա, բաց թող, Շամամ...

Դեռ չի գուշակել:  
Զեռքերը Փիլիկ  
Սեղմում են տղի այտերը թխլիկ:  
Գլուխն Համբոյի թեքվելով յետ-յետ,  
Սահելեն իջավ յերազով սավառ  
Մինչև վոր գտավ հենվելու մի կետ,  
Ընկավ Շողերի կրծքին բոցավառ...  
— Աղջի ետ ով ես, քո մուխը մարի,  
Դեվ Ես, թե ամպից վեր յեկած հուրի...  
Մրմնջաց տղան հեքով շնչասպառ,  
Ու ել պապանձվեց, վոչ լեզու, վոչ բառ,  
Միայն գլուխը սիրածի լանջին  
Հանգչում եր՝ ներքին թրթիռն ականջին:  
Թուլացավ նաև սիրտը աղջկա,  
Համբոյի աչքին ել արգելք չկա,  
Զեռները յարի շինքն են պատսւմ,  
Ու ճակտին մի զույգ արցունք ե կաթում:  
Համբոն կամացուկ աչքը ծերպ արեց  
Ու ապշեց մի պահ... Փափագն ե՝ յարը...

Կուրծքն ալեկոծվեց ու միտքը մարեց.  
Ու մեկ ել կասես վառվեց Ջիգյարը  
Յեվ տղեն հանկարծ քրտինք ու քափով  
Մի վոստյուն գործեց կատաղի թափով,  
Կոներն աղջկա իրանը փաթթեց  
Ու կուրծքը — կրծքին պինդ-պինդ խտըտեց:  
Վոչ մեկի բերնում ել լեզու չկար.  
Բայց ինչի՞ են պետք բառերը տկար,  
Յերբ հեքը գողդոջ ու բոցերն աչի  
Հետը են կարմիր հալվեհալ պաչի  
Համերգ են կազմել վեհ, յեղեմական  
Ու գովքն են յերգում, սիրո կուսական...  
Շողերն արբել ե Համբոյի գրկին,  
Թուշը պինդ սեղմած նրա պոնկին  
Ու դողի միջի  
Մեղրածոր պաչի  
Խուլ ձայնն ե հնչում կրկին ու կրկին:  
Յերջանիկ զույգին ծառն ե պաշտպանում  
Ոտար հայացքից,  
Չարկամ, վատ աչքից  
Յեվ քամին վերնուց ծաղկունք ե ցանում,  
Առվակը խնդում, գովում ե բարձր  
Կուսական անմեղ սերը են քաղցր...

Թուան, սլացան վայրկյաններն արագ.

Աղջիկը յարի գրկիցը պոկվեց,  
Ճարպիկ վոստյունով սիրածից ջոկվեց  
Ու վորպես վայրի մի յեղնիկ խրտնած,  
Թռավ տան ճամբեն դոզդով, սպրդնած։  
Աչքը վեր կալավ, ցամաքեց թուքը...  
Թռիս փափախավոր  
Մի չար ալեոր  
Հազար ու շփեց սիպտակ մորուքը։  
Շողերին սառը քրտինքը սլատեց.  
— Վայ զլիսիս, չլինի, Մուղսին նկատեց...+

II.

Ու Մուղսի Մաղոն հետևյալ որը  
Ժամը գնալիս ձեն տվեց հորը.  
— Խնամի Ավետ, հը<sup>օ</sup>, առաջ բարի,  
Կաց, բան եմ ասում, հլա դեսն արի:  
Ու յերբ Ավետը հին շալը ուսին,  
Փետը սուն տալեն մոտ գնաց, Մուղսին  
Առաջ մի հազաց, վառեց Հիբուխը  
Ու կամաց խոսեց, թողնելով ծուխը.  
  
— Մի բան եմ տեսել անց կացած որս.  
Ուզում ի չասեմ... պատում ա փորս.  
Ասենք լավ բան չի, ամոթ ա, գիտեմ,  
Մարդիս դժար ա ու նամուսին դեմ,  
Բայց ախար... մենք ել թասիրի տեր ենք,  
Վոչ բարով գեղի իշխան ու ծեր ենք,  
Մենք պիտի հնուց աղաթն ու վարքը  
Հաստատուն պահենք. Ետենց ա կարգը.  
Թե չե, վոր ջահել-ջուհուլին մնա,  
Մեր սուրբ հավատը ձեռից կ'զնա...

Նա մեկ ել ծծեց են դառը ծուխը,  
Ապա հառաչեց, կախեց զլուխը

Ու հետո պատմեց, թե յերեկ այգում,  
 Են կանանչ ափին, ծառի շվաքում,  
 Ինչ բան եր տեսել խախտառակ,  
 Վոնց եր լկում աղջիկն անառակ:  
     — Բաս, միտք եմ անում, ասում հեյ գիղի,  
 Եստեղ նամուսով մի ծնող պիտի,  
 Վոր չհարցնի ջիգյար ու վորդի,  
 Խանչալը քաշի, հավի պես մորթի,  
 Վոր եթա խրատ լինի լսողին,  
 Թե չե, վոր տեսան եսոր թույլ թողին,  
 Վայն եկավ տարավ... ամեն անզգամ  
 Կապը կ'կտրի՝ գժվի ես անզամ:  
     Դե վեր, խնամո, ել քեզ մի մաշի,  
 Գնա ջահելիդ գյամը լավ քաշի:

Շողերն ընկած եր. ավլուսուրբի հետ,  
 Վոր հայրը ժամի ճամբից դարձավ յետ:  
 Կինը տանը չեր:  
 Աքլորականչ եր,  
 Վոր գնացել եր աղենց հաց թխի:  
     (Դե, եդ ա որը թշվառ հացթուխի):  
 Յերկրորդ աղջիկը՝ նոր կթած կովը  
 Արոտ եր տարել աղբյուրի քովը.  
 Զեռ ու վոտ ընկած են յերկու մանրը  
 Իրարից խլում, չմթում ին սանրը,

Վոր շուտ դուրս թռչեն խունջիկ ու մունջիկ,  
 Բերեն լավ բանջար, մանուշակ, փնջիկ.

Ավետը անխոս շպրտեց դուռը  
 Ու շեմքին ցցված, հայացքով ծուռը  
 Չափչփեց մրոտ անկյունները տան:  
 Փոքրերը սստված ծակերը մտան:  
     — Վայ ջարդվին, փրթվի ժառանգը ձեզ պետ  
 Հա ճվճվում եք, խոզի ձագի պես...  
 Կորեք, ասում եմ, կործանվեք բակը,  
 Թե չե կ'քցեմ վոտներիս տակը...

Ահից կուչ յեկած՝ յերկու պուճուրը  
 Պատին քսվելով փախան դեպ դուռը:  
 Խրճիթը մնաց հորն ու Շողերին,  
 Չայրբույթ ու վախին, սրտի դողերին:  
 Ապա սուն տալով ձեռնափայտը ծուռ  
 Հայրն առաջ անցավ գունատված և լուռ,  
 Տքաց ու նստեց հին սանդաքարին:  
 Դանակ տաս սրտին, չի կաթի արին: <sup>1)</sup>)

Նա խոր հառաչեց՝ թութունի տուփը  
 Դուրս քաշեց ծոցից, յետ տարավ խուփը,  
 Տեսավ. աղջիկը քաշվում ե յետ-յետ,

<sup>1)</sup>) Բարկությունից արյունը ցամաքել եւ.

— Մի ջնանդամվի, գործ ունեմքեղ հետ:  
«Վայ գլխիս, Մուղսին, են սևավորը,  
Բան ու ման ասած նինի՞ հորը...»  
Խախկ ու խայտառակ կընի սաղ գեղում:  
Ու հալվեց, մեռավ աղջիկը տեղում:

— Յերեկ վորտեղ իր, այ շանից ծնված...  
Աղջիկը սարսափ—սոսկումից ծվաց:  
— Հը, պատասխան տուր, վորտեղ իր  
յերեկ...  
Եյ, Սաթոն, կատոն, մի պարան բերեք...  
Ու զարդանդում ե զավակն հանցավոր  
Հոր սև աչքերի բոցից ահավոր:  
— Ի՞նչ ես պապանձվել. յերեկ, ճաշին մոտ  
Վորտեղ յես ելել դու, լիրբանամոթ...  
Խոսի, չես առում:  
Տես, ենպես սասում  
Կը բերեմ գլխիդ, վոր յերդիկ-բաշի  
Սաղ գեղ ու գավառ կիտվեն թամաշի:  
Յերեկ վորտեղ իր, քեզ հարց եմ տալի  
Ի՞նչ ես լրի պես հեծկլտում, լալի...

— Յես... ենտեղ... բաղում...  
Բանջար ի քաղում...

— Բանջար իր քաղում...  
Թքեմ քո կաթին,  
Բա ովկ եր Բոշի թոռի խտտին  
Դարբինենց ափում  
Նամուսը թափում...  
Ի՞նչ ես կարկամել, դու չիր, անզգամ...  
(Ել խոսելատեղ չկար ես անզամ):  
Շողերի գլխին յեռման ջուր մաղվեց,  
Կմկմաց մի բան, բայց լեզուն շաղվեց,  
Գլուխն որորվեց, թուլցան չոքերը.  
Աղջիկն հանցապարտ յեկել եր ծունկի,  
Սուր հեծկլտանքն եր պոկում թոքերը  
Ու աղբյուր հոսսւմ աչից արցունքի:

Դե լավ, ել գաղտնիք չմնաց ծածկած,  
Մուղսու ասածը ճիշտ եր անկասկած.  
Աննամուս դուստրը փուչ ու անառակ  
Թքեց հոր պատվին, արեց խայտառակ...  
Պետք եր վերցնել սև բիծն ոջաղի.  
Ու հիվանդ հայրը գոչեց կատաղի.

— Այ, կատոն, Սաթոն, ջարդվի ձեր վոտը  
Վայ, վայ կտրվի աղջկա հոտը,  
Պարան հասցրեք ասի ձեզ, պարան...  
Վոչ ու փուչերը տեսնես ուր կորան:—

Հոր կոչին դրսից պատասխան չկա.  
 Միայն խուլ ճիշն ե անբաղդ աղջկա  
 Դառն հեծկլտանքի միջից կծկտուր  
 Աև յերդիկն ի վեր թոշում դեպ կտուր։  
 Հայրը փոքրերին տալով զրողին,  
 Վոր իր հրամանն անկատար թողին  
 Ռւժերն հավաքեց, շալը քցեց ցած,  
 Ու յելավ վոտքի սաստիկ զայրացած,  
 Հասավ խնոցուն կապած չվանին,  
 Վոր սև սուգ բերի աղջկա ջանին։

Հենց այդ միջոցին ճիչ—աղաղակը  
 Մեկեն թափվեցին փողոցից բակը,  
 Դուռը սարսափից մոնչաց թափով  
 Ու խեղճ Մարանը քրտինք ու քափով  
 Աչքից թափելեն արցունք ու արին  
 Հասավ մահապարտ դստեր հավարին։  
 Սաթոն ու կատոն մորից անբաժան,  
 Վողբում են սարսում հոր դեմքից դաժան։  
 -- Միրտդ մեռնի, մարդ, ճարդ կտրվի,  
 Ելած իլիկդ<sup>1)</sup> ել տեսնեմ կոտրվի,  
 Ել իմ<sup>o</sup> յես ետենց գժվել, փրփրել,  
 Ի՞նչ ես խեղճ քորփիս սիրտը քրքրել...

<sup>1)</sup> Վողնաշար

Յեվ մայրը վազեց՝ բազուկները բաց,  
 Գրկեց իր բալին, պաչեց դեմքը թաց  
 Ու փարչով պուճուր  
 Տվեց մի պուտ ջուր,  
 Վոր վախը անցնի։

Ավետը անխոս հենվել ե սանը  
 Մի աչքն աղջկան, մինը՝ կնկանը,  
 Ողակն ե շինււմ՝ յեզսւն կարկամած։  
 Նա հեքի միջից մըռմռաց կամաց։

— Յես պիտի խեղդեմ եղ ոձին, մորթեմ,  
 Սաղ ու կենգանի կաշին պիտ քերթեմ...

Խի՞ այ սրտամեռ, լեզուդ պապանձվի,  
 Ի՞նչ արած ունի իմ անմեղ գառը...

Մի վախի բալես... ինչքան ա սառը...

Բոլ ելավ, այ մարդ,

Այ պատիժ ու դարդ,

Ի՞նչ յես գազազել, սև զրող դառել,

Ի՞նչ յես յերեխուս աչքի յեղն առել...

Անմեղ ա... գառը...


Հեգնեց նա դառը,—

— Վայ, կնիկ, կնիկ, կուրանա աչքդ,  
 Լուսինդ սենար, չորանար մեջքդ...

— Ի՞նչ ա արել, ի՞նչ...

— Իրան հարցրու, տես իմ<sup>o</sup> յա սստվում.

Ասա մի, յերեկ ով եր յկստվում



Բոշի թոռի հետ, են լիրք անառակ,  
Կանաչ ափումը, ծիրնի ծառի տակ...  
Բա մորթելու չի  
Եղպես մի փուչի...  
Դա թքեց իր հոր թասիր-նամուսին.  
Տես ի՞նչ ե պատմում Սանամեց Մուղսին...

Մարանն ամոթու ճանկուց թշերը,  
Իսկույն միտ բերեց անցած գիշերը  
Տեսած մի յերազ, յերազ սարսափի...  
— Վայ աղջիկ, աղջիկ, քո միսը թափի,  
Եդ դժւ յես ելել... ինչեր եմ լսում  
Թե շիտակ լինի, պատիժ ու ցասում  
Կթափեմ գլխիդ. կրակներ պեծ-պեծ...  
Բա հվ եք տեսած զուլում բան եսպես...  
Դե մի լա ասի, մեռնի քո նանը,  
Գիտեմ իմ բալեն դրա տերը չի,  
Վոնց են պատրիսել բա մեզ եդ բանը,  
Եդ աննամուսը... չե... չե, իմը չի...

Աղջիկը խեղդող արցունքի միջից  
Լեզուն ծամծմեց, կմկմաց մի քիչ.  
— Ախ, յես մեղք չունեմ... նանի ջան,  
նանի...  
— Ջան... Ջասի... նանը քո չարը տանի,  
Հողեմ քո Մուղսու գլուխը սիպտակ.

Քաշես վոտի տակ, անես շան-սատակ.  
Ասես, անհոգի, վոտ-զերեզմանի,  
Գոզնած մարդ ես, աչքդ կիսակուր,  
Վոնց ես խառնվում ջահելի բանի,  
Հոգուդ մեղք անում, ասում սուտ ու զուր,  
Տեսնես ում լակոտն ում բիջն ա տարել,  
Սևհոգին շառը մեզնով ա արել:  
Յես ի, չի հասնում, բա դու անգութ հեր  
Կատղել ես, դողում. չես ասում սուտ Ե՞ր,  
Պիտի անտեղի հոգիդ ծախեյիր  
Ա՛խ հեռն իմ բալից, ո՛ հեռը, հեռը...  
Չորանա քեզ պես ծնողի ձեռը...  
Ու գուրզուրելով կրկին ու կրկին,  
Մայրն համբուրում ե դստերը գրկին.

Փոթորիկն անցավ:  
Հայրը մեղմացավ:  
Ի՞նչ տաս, վոր կնկա խոսքն ա շիտակը...  
Վայ թե հենց անմեղ լինի զավակը:  
Դե, լեսենց ազգում հարամ-կաթնակե՞ր...  
Աստված վոչ անի, սիրտը կ'ճաքեր...  
Թշնամի մարդի լեզուն չորանա,  
Մուղսին չի ջոկել, դե... հավկուր ա նա»:  
Ավետը կրկին առավ շախ ուսին,  
Դուրս յեկավ տեսնի վորտեղ ե Մուղսին.  
Ուզում ե փաստը սառուգել նորից,

«Զուր իսի՞ յա զավակն հանում իր հորից,  
Ու անմեղ բալի պատիվս անտեղի  
Մի մատ մեղը անում<sup>1)</sup> միջին սաղ գեղի»:

Ամեն մարդ թողեց, գնաց իր գործին,  
Ազջիկն ել դրեց գլուխը բարձին:  
Անցան շաբաթներ, ամիսն ել եկավ,  
Բայց նրա վոտը շեմքից դուրս չեկավ:

Շողերն՝ հնազանդ հոր հրամանին,  
Կանաչի կարոտ մաշվում եր տանը,  
Լվացքի, կարի, աման-չամանի,  
Ցեփի ու թուխի, դա յեր իր բանը:  
Բայց կայծն են սիրո աղջկա սրտում  
Ցերեք չեր հանգչում: Ուրախ թե տրտում,  
Կրծքի տակ մի բան պեծին եր տալի.  
Մին հույսն եր փայլում, պայծառ ծիածան,  
Մին հոգին ճնշվում, դառնագին լալի:  
Ախ, ինչու գաղտնիքն աշխարն իմացան...

Նա հաճախ մտքով թոշում եր հեռուն,  
Այ, ափը կանաչ, ծառներ ծաղկազարդ,  
Սիրածը գրկին, դեմը խենթ առուն  
Կչչում այնպես քաղցը ու ազատ...  
Հալվում եր խեղճի ջիգյարի յեղը.  
«Յարաք վնաց կընի ես ցավի դեղը»:

1) Բամբասանքի առարկա դարձնում

Համբոն ել ենտեղ մնաց հալումաշ,  
Կուրծքը լի հառաչ, շուրթին ախ ու վաշ.  
Բան ու գործ թողած, չոլերն ե չափում,  
Սիրածի համար տաղեր ե կապում.

Յեվ որ ու գիշեր քարափից բարձր  
Յարին ե ղրկում դայլայլը քաղցը:

Վառվեցի մենակ տաղեր ասելեն,  
Ի՞նչ կընի մի զառ ձենիս ձեն բոնես,  
Աչքս ջուր դառավ քեղ սպասելեն,

Ախ՝ յերսեկ մի որ թեվ առնես, թոնես:

Աղջի, անիրավ, քո սիրոը քար ա,  
Խի յես աղ ցանում մոմուռ ջիգյարին,  
Են վոր կուապաշտ ջիվանը կարա  
Սերը սրատի, ուրանա յարին:

Գարունը անցավ: Ցեկավ ամառ:

Բայց Շողերը միշտ մորիցը թաքուն  
Մութ անկյուններում լալիս եր դառը,  
Ցերեկն անհանգիստ, գիշերներն՝ անքուն:

— Բալա ջան, իսի՞ յես մաշվում որեցոր  
Ասում ե մայրը,—ցավ ունես վոնցվոր,

Տեփուր յերեսիդ են գույնը ալվարդ

Ռուր կորավ... Հալա ջահել ես, անդարդ...

— Սեղմում ե կրծքին գլուխը բալի,

Համբույրով ոծում ու թաքուն լալի:

— Աղջիկն հառաչում,

Մոր ծիծը պաշում  
 Ու մրմնջում ե  
 -- Ախ նանի, նանի...  
 -- Զան, ի՞նչ ա, բալես, ցավդ ասա, զանի,  
 Չըլի վախեցար դուն են սև որը...  
 Վատ հոր շինքը նի պըծնի փորը,  
 Վոր անմեղ գառիս իր արդար տեղին  
 Սրտաճաք արեց ու պատուց լեղին:

III

Մի որ համբոյի մայրը՝ Զարդարը  
 Բոնեց Մարանին այգուց դառնալիս,  
 Թե—աղջի գլխիս ընկել ա քարը,  
 Քամի յա դիպել մինուճար բալիս:  
 Ես վեց ամիս ա, վոնց վոր սարսարի,  
 Իրան տվել ա չոլի ու քարի...  
 Ել հո տանը տուն չի ասում, սկի,  
 Մի հետ ընկել ա դուշմանի խոսքի:  
 Ասում եմ, չըլի,  
 Զահել ա ելի,  
 Սիրած ունենա, սեր ընկած ըլի.  
 Չունքի, լսում եմ մի մին յերազում  
 Աղջկա հետ ա նա դելը տալի:  
 Ռվ գիղի, գուցե կարգվել ա ուզում...  
 Դե շատ դժար ա, արունն ու միսը...  
 Եղ մի տղեն ա իմ աչքի լիսը,

Տես մազ եմ դրել ու Մասիս քաշել<sup>1)</sup>  
 Հասցրածս եղ ա, ումբըս եմ մաշել...  
 Հիմի, ասում եմ, քաշեմ լծի տակ,  
 Բալքի կարենամ, վոր բերեմ կապի...  
 Աղջի, ես մտքիս, ի՞նչ կասես, շիտակ,  
 Թե բիր ես խելք դի, ծուռը մի չափի<sup>2)</sup>)  
 — Ի՞նչ ասեմ են ա դու տղամեր ես  
 Ճակատդ բաց ա ինքդ՝ պարզերես  
 Դե վարք ա, տղեն յեկավ հասակի,  
 Ականջից բռնի, քաշի պսակի.,.  
 — Հիմի ծուռ նստենք ու խոսենք շիտակ  
 Մարան ջան, մի բան ասեմ խոստովանք,  
 Յես փափագ ունեմ լավ բարեկամի  
 Ուզում եմ... քեզ հետ դառնամ խնամի...  
 Հը՛, իսի՞ հուշտ ելար, նեղացար կասես,  
 Դու գաս իմ տղի մի փութը<sup>3)</sup>) ասես  
 Թե մենք ենք ստոր, մեր տունն ու տեղը,  
 Պակաս ոջախ չենք, վկա յա գեղը...  
 — Զե, գիտես ինչ կա, քիրս ջան, Զարդար  
 Թե կուզես խոսքը իմանալ արդար  
 Յես փութ չեմ դնում քո տղին, տանը,  
 Համա... դե ախը ետենց չի բանը,  
 Ամեն գործի կա մի աղաթ, մի կարգ

1) Մեծ դժվարութլուններ եմ կրել:

2) Խեթ-իսեթ մի նայի:

3) Պակասությունը

ՄԵՆՔ ունենք հնուց սովորութ ու վարք,  
 Աղջիկ ուզելու կանոնը եղ չի,  
 Հո իմ յերեխեն չոլում քցած չի...  
 — Վայ, կուրանամ յես, են ժամը վկա,  
 Մտքումս ետենց մի ծուռ բան չկա,  
 Դե գիտեմ, հարկ ա, մեր աղաթ—վարքին,  
 Խնամիսոս կդան գրավով, կարգին...  
 Ասի իմանամ զոլը քո բերնի<sup>1</sup>  
 Վոր ուզնկանը պնդիցը բոնի:

Հետեվյալ որը Համբոյի քեռին  
 Խնամիսոս յեկավ գրավը ձեռին:  
 Աղջկա միտքը գիտեր Մարանը,  
 Ավետն ել դեմ չեր ես առուտուրին,  
 Եդ եր, վոր յերկար չքաշեց բանը  
 Ու ենքան ել շատ նազ ու տուզ չարին  
 — Ախաղեր, յես տվի, իմ սիրտը լեն ա,  
 Ասաց Ավետը,—աղջիկ ա, են ա  
 Հասել ա, պիտի տանք մեկն ու մեկին,  
 Դե հո չեմ տալու խանին ու բեկին...  
 Աղջիկն ու տղեն իսկական սազ են  
 Իրանց արեվի ձենը թող ածեն<sup>2</sup>):  
 Իմ բաժինն Աստված շնհավոր անի,  
 Բարով պսակին լինենք արժանի:

<sup>1)</sup> Քո տրամադրությունը

<sup>2)</sup> Թող հասնեն իրանց նպատակին

Հայրը վոր տվեց, ել աղջիկ ու մեր  
 Ե՞նչ կարան խոսան, ովք բերան ուներ...  
 Քեռին գրպանից հանեց մատանին  
 Ու գրավ տվեց աղջկա նանին,  
 Վոր ուրբաթ շաբաթ զուռնա ու դափով  
 Լավ նշան բերեն պարով ու ծափով...  
 Տվին ու առան՝  
 Խնամի դառան:  
 Հետը խմեցին մի մի թաս գինի,  
 Վոր կապած պայմանն հաստատուն լինի:

Ցնծություն յեկավ Շողերի հոգուն  
 Են ծով աչքերը ժպտում են թագուն  
 Յեվ յերազները վառ՝ կրծքի տակին  
 Իրար են գալի ակին-կրակին:  
 — Եհ, փառք Աստծու, փառք հազար  
 բերան,  
 Խոսում ե մտքում աղջիկն ինքն իրան,  
 — Վոր եսքան տանջանք ու տրորվանքիս  
 Վերջ ելավ, յես ել հասա բաղձանքիս:  
 Յեվ գիշերն ամբողջ խեղճը միալար  
 Դես դեն եր շրջվում գալար ու գալար.  
 Ու բորբոք սրտին հանգիստ չին տալի  
 Հույզերը բազում: Նինջը չեր գալի:  
 Յեվ լուսաղեմին, յերբ աչքը կպավ,  
 Նրան ահավոր մի յերազ յեկավ:

Տեսնում ե, պար ե, յերգեր ու խնդում,  
Ծափերի ձայնից ոճորքն ե թնդում  
Յեվ հարս ու փեսա զուգված ու զարդար,  
Գնում են ժամը պսակի արդար։  
Զույգի առջեկից լավ զուռնա ու դափ,  
Խնդում, կեցցեներ, պար, ծիծաղ ու ծափ։  
Յեվ մեր ու մանուկ, փողոց ու բաշի  
Յեկել են սիրուն հարսին թամաշի  
«Ինչ լավ ա հարսը, ի՞նչ բոյով՝ փեսեն»  
Լսվում են բարձր կողքերից ես են,  
Յերնեկ են տալի բոլորը եսոր  
Են աշքը-լուսի բախտավոր կեսոր։

Ահա մոտեցան ժամի սև պատին,  
Խաչ-յեղբայրն արագ վեր կալավ թեվը,  
Սրով խաչ քաշեց դռան ճակատին,  
Վոր նի խորտակվեն չարերն ու դեվը  
Յեվ բանան ճամբեն բախտավոր զույգի  
Դեպ առագաստը յերջանիկ կյանքի...  
Բայց ահա... նրա աչքին մեղավոր  
Հրեշ յերեաց մի թուխ բեղավոր,  
Վորի սև դեմքը անեծքն եր պատում,  
Դաժան հայացքից կայծեր ին կաթում...  
Ու հանկարծ դեի սուրը շողշողաց,  
Հարսնացուն ճչաց, սարսափից զողաց,  
Յեվ մեկ ել տեսավ ինքը անփեսա,

Կուրծքը լայն խոցված մեռնում է ես ա:  
Աղջիկը ցնցվեց վեր թռավ թափով,  
Դեմքը ծածկվել եր քրտինք ու քափով...  
Նրա բարձի մոտ նստած Մարանը  
Զեռով շոշափեց ճակատն աղջկա  
Ու թե—վայ գլխիս, մեռնի քո նանը,  
Խի լես դողդողում, վրիդ շունչ չկա:  
Շողերն՝ յերազի սարսափն աչքերում,  
Են փայլուն սուրն ե իսկույն միտ բերու  
Յեվ կուրծքն ալեկոծ, բարձր հեվալեն  
Լեզուն կիսակապ մըմնջում լալեն.  
— Ախ... յերազ, նանի...

- ԱՇԽ... յԵՐԱՊ, ՆԱՆԻ...
- Ի՞ՆՉ յԵՐԱՊ, ՆԱՆԴ ՔՈ ՀԱՐԸ ՄԱՆԻ...
- Ո՞Փ, զարզանդում եմ, սուր ու թուր  
արին...
- ՄԻ ՎԱԽԻ, ՏԵՐԸ ԿԱՏԱՐԻ ԲԱՐԻՆ,  
ԱՍՈՒՄ ԵՆ ՍՈՒՏ ա յԵՐԱՊԸ ԼՈՒԽԻ,  
ՍԻՐՄԸ հԱԼՎԵհԱԼ ՆՈՐ-ՆՉԱՆ ԿՈՒՅԻ:  
ԱՀՔԵՐԴ ՄՐԵԻ, ՎԵՐ, ՎԵԱՍ ՀԿԱ,  
ՇՈՒՄ, ԲԱԼԵՍ, հԵՐԴ ԺԱՄԻԾ յԵՄ ԿԳԱ,  
ՀԱց ԿՈՒՂԻ, ԴԵՌ յԵՍ ոճախ չԵՄ ՎԱռԵԼ,  
ԾԵԳԻՑԸ՝ ԿՇՄԻԴ գԵՐԻ յԵՄ ԴԱՌԵԼ:

IV

Ավետին այդ որը շատ ուշ դարձավ առև  
Բայց ուղախ, առույգ, անսովոր թեթև,

Կասես տվել ին նրա սրտին սուն,  
Ու բագը կանչեց կնոջն հեիհե  
— Մի մեծ աչքալուս պիտի տամ, աղջի  
Համա քեզ պահի, խելքդ չ' փախչի,  
Ով կ' հավատա, հլա մի ասա...  
Սարգիս աղի պես թագավոր փեսա...  
— Վո՞նց թե... եղ ինչ ա... ցնդել ես,  
այ մարդ...  
— Ցնդելու բան ա, կնիկ, չես ասում,  
Պիտի կուրանա թշնամիս նամարդ.  
Սարգիս աղեն ա աղջիկս ուզում...  
Չորս մարդ ա դրկել ժամիցը դեսը,  
Թե տերտեր բերենք, կատարենք ծեսը...  
— Մարդ, ձենդ կտրի, բերնից չհանես  
Մեզ գեղամիջին խայտառակ կանես.  
Քեզ ձեռ են առել, վայ քո շաշ գլխին,  
Եղպես սարսաղ բան ել չասես խալխին:  
— Ում ձեռ առնեն, ի՞նձ... մերը չմեռնի.  
Այ հո, Ավետը հում բաներ բռնի...  
Նա ձեռը տարավ ու հանեց ծոցից  
Մի ճիտ մահմութի<sup>1</sup> ու մատնիք վոսկի,  
Վորի ակունքի շողշողուն բոցից  
Մարանը շշմեց ել չեկավ խոսքի.  
Նա չմթեց մարդուց զարդերը անգին

Յեվ չտեսի պես սեղմելով կրծքին, ...  
Ուզեց խմանալ, յերազ հո չի սա...  
«Բա... Սարգիս աղեն հացթուխին փեսա...  
— Չընի, հրաշք ա...  
— Տո բախտ ա, ի՞նչ կա...  
Մին հլա դրկեց սուդյա Թաթոսին,  
Նրանից հետո՝ աբեշիկ Սոսին,  
Վերջը գալիս ա Տիկոն տանուտեր,  
Թե—այ, դանդալոշ, բինգազ անտեր,  
Թառլան աղջիկդ չի սազի բոշին,  
Բաղդ ա, բերել ա, տուր գեղի փաշին—  
Այ կնիկ հլա, Աստված ա զիտում:  
Եղքան իշխանին հո չեմ հավատում,  
Քո ասած՝ յես ել միտք արի ինձ-ինձ  
Թե չընի սրանք ձեռ են առել ինձ...  
Վերջը ինքն աղեն խանութի դոնից  
Դուրս յեկավ, զոռով քաշեց իմ կոնից  
Ու տարավ նեքսե...  
— Վայ քո սիրտը սե...  
Քա դե լավ, եգ լավ, վերջը վճնց ելավ...  
— Վերջը նա թափեց վոսկեղեն մի դեզ  
Թե վեր կալ գրավ ինչքան վոր կուզես,  
Թե՝ Շողերիդ յես պիտի առնեմ կին.  
Բերան չըերես ել մեկն ու մեկին...  
Բաս, այ կնիկ ջան, բանը եղ տեսակ,  
Եղուց կամ ելոր կ'զնան պսակ...

### 1) Տաճկական մեծ վուկի

Տար վոսկին քցի ճիտը Շողերի  
Են չար դուշմանի սիրտը թող երի  
Ու դես տուր Բոշենց մատնիքը բերած,  
Տանեմ շպրտեմ, սեվցնեմ իրանց.

— Լավ, այ մարդ, բա վոր հանկարծ  
աղջկա...

Սրտին փեսացուն... յեսիմ, դուր չ'գա...  
Ես թվի ջահելն, Աստված աղատի...  
Դե գիտես, փեսեն շատ մեծ ա զաթի...

— Աղջի... այ ցնդած... հլա սրան-տես,  
Ռեխին... բռնես, լեզուն սրատես...

Մարանն ել մնաց փոշման իր խոսքին  
Ու կիցը լիքը նշանի վոսկին  
Վազեց՝ աղջկանն աչքալուս տանի:  
— Բան չեմ հասկանում, ես ի՞նչ ա նանի  
Ի՞նչ Մարգիս աղա, ում ա նշանում...  
Լավ, տղեն կարգված ու թոռն ել պուճուր...  
Վայ... սիրտս մաղվեց... նանի, մի պուտ  
ջուր...

Աղջիկն յերկու քայլ յետ ու յետ գնաց,  
Սանը հենվելով, թուլացավ մնաց.  
Ու ձեռի թեշին վայր ընկավ գետին:  
— Դե, արի խելք դիր եսենց անգետին...  
Աղջի, դու կընես իր, աղի կինը,

Անքուն ցեցի<sup>1</sup>) տեր, ծով տան տիկինը,  
Հագածդ կընի աբրեշում ու խաս,  
Ակնոնք ու վոսկու միջին կիսաղաս...  
Ի՞նչ անենք վոր քիչ սիպտակ ա բեղը,  
Տո կյանքդ ու փառքդ թող լինի տեղը:  
Շողերը անխոս թուլացավ, դողաց,  
Սունին քսվելով դեպի ցած սողաց  
Ու հառաջանքով վուլ եկավ քարին:  
Սրտից ծորում եր լեզի ու արին...  
— Նանի ջան... ախար... բա են գրավը...  
— Դե հլա սրան... գրողն ու ցավը  
Են սոված, տկլոր բոշեքին տանի,  
Մեռնի դիդարը են սև սատանի:  
Ոխտն աղջիկս ըլի, ոխտն ել շիլ ու կաղ  
Յես չեմ տա բոշին... դե լավ, քեղ մատաղ,  
Դու խղճով խոսա  
Վորն ա լավ փեսա:  
Աղջիկը հանկարծ  
Բագուկները բաց  
Մոր վզովս ընկավ, լալեն մրմնջաց՝  
— Նանի ջան, յես ձեր ճորտն եմ ու գե-  
րին,

Դուք ու ձեր խիղճը, քցեք գելերին...  
Համա... իրավունք թե տայիք խոսքի,

) Անսահման հարստություն:

Յես չեցի առնի ձեր աղին սկի,  
 Վոր մեռլահոտ ա փշում բերանից,  
 Զահելն ինչ վայելք առնի նրանից...  
 Վերջին բառերը կորան արցունքում,  
 Նա հեցկլտում ե ու ծանր տքում:  
 — Վայ գլխիս, եղ ել խօսք ա աղջկա...  
 Չե, բալես, մարդ հոր կամքից դուրս չի դա  
 Վժր հերն ու մերը, վժր ծնողն արթուն  
 Կյանք վայելչություն չի ուղի վորդուն...  
 Դու դեռ յերեխա, անփորձ ես բալես,  
 Աղքատին վայելք չկա, սխալ ես...  
 Թող գառս, ճիտդ թող գցեմ վոսկին,  
 Մի հակառակի դու մորդ խոսքին:  
 Շողերը թիկնած սև սանը մրոտ,  
 Վիզը թեք, գունատ, աչքերը ջրոտ  
 Մորն եր անձնատուր, վորպես մի գերի,  
 Ուզում ե մորթի, ուզում ե երի...

V

Դափունի ձայնից թնդում ե գեղը.  
 Բաղմաթիվ հյուրեր զանազան տեսակ  
 Նոր հարս ու փեսին առած մեջտեղը,  
 Մեծ շախ ու շուխով տանում են պսակը  
 Բոլորի գեմքից ծիծաղ ե թափում,

Մենակ են ե, վոր հալ չունի հարսը  
 Աչքերից շիթ-շիթ արցունք ե չափում,  
 Միպտակը՝ դուրսը ու սկը՝ ներսը<sup>1)</sup>:  
 — Տղեք ջան, խմենք կենացը փեսի.  
 Քարով վայելի չորրորդ պսակը,  
 Վոր սիտ կատարվի ժամումը հեսի,  
 Թող վոսկով լիքը լինի քսակը,  
 Գոռացեք «ամեն»...  
 Հույրերը ամեն  
 Չեն ձենի տվին—այ ուռա, ամեն:—  
 Բոշենց տղեքը գլխակոր, տըտում,  
 Հեռվիցը հեռու նայում են խեթ-խեթ.  
 Թասիրի հարց ե, քեն ունեն սրտում,  
 Ախը վոնց կուլ տան կոտրությունը և եղ

Յերբ վոր պսակը մոտեցավ ժամին,  
 Ավելի զլեց հայ-հույն ու պարը,  
 Մեկ ել վոնց կանգնի ոատանի քամին,  
 Զորս կողմից վզզաց կոշտերն ու քարը:  
 Սատվեցին մեկեն զուռնեն ու դափը.  
 Սառեցին կիսում պարերն ու ծափը.  
 Մկավեց աղմուկ, ժխոր, փախեփախ...  
 Վորը մի չուստով, վորը անփափախ  
 Դես-դեն են վազում հյուրերը հարբած  
 Ապուշ ու շիվար, բերանները բաց:  
 1) Հագուստը սպիտակ, խոկ սիրտը սև:

Յեկ ահա Համբոն խանչալը ձեռին  
Վաղում ե աջից դեպ նորափեսան:  
Չախից մահակով հասնում ե քեռին  
Ու Բոշենց ազգը տասնըհինգ —քստն  
Տղամարդ ուժեղ,

Վոնց ճանձ ու մժեղ,  
Քարով ու փայտով զրոհ են տալի,  
Ուզում են ծերուկ փեսին սպանեն  
Ու իրանց հարսին փախցնեն տանեն:

Նախ Սարգիս աղեն շշկվեց մի քիչ,  
Բերնից թոցրեց յերկյուղի սուր ճիչ:  
Բայց իսկույն իրան հավաքեց շուտով  
Յեկ զենք ու զրահ պահանջեց փութով:  
Գոչեց չ'վախել քար ու մահակից,  
Հավար պահանջել գեղի պահակից:  
Զինվել հրացան սուր ու սուսերով,  
Խոկել թշնամուն իրար ուսերով  
Յեկ ազգը Բոշենց վողջ սուրը քաշել,  
Մեր ու մանուկը խորովել, խաշել...  
Վոր լավ ճանաչեն շներն անամոթ,  
Թե ով ե դեմը, ում են գալի մոտ...

Հարսանիքն արդեն փոխվել ե սուզի  
Կանայք վողբալեն՝ միջիցն արցունքի  
Ճիչ ու ծվոցով ընկել են դես-դեն  
Փախչում են. թե ուր, իրենք են չիդեն,

Ու Սարգիս աղեն նեղին ե լծված.  
Խանչալը ձեռին՝ Համբոն անաստված  
Ճամբա ե բացում միջովն ամբոխի,  
Վոր սուրը փեսի Ջիգյարը կոխի...

Բայց բախտը կտրեց.  
Հավարը հասավ. ել ի՞նչ դադանակ,  
Պես-պես հրացան ու ատրճանակ  
Մահի սև փայլով սղում շողացին  
Ու հազար սրտեր ահից դողացին:  
Պահակն եւ հասավ՝ չորս-հինգ ձիավոր,  
Կոփիվ ավելի դարձավ ահավոր,  
Մի կողմից բռունցք, մահակ ու քարեր,  
Դիմացից՝ գնդակ, շոշողողուն սրեր:

Խեղճ նորահարսը կսկիծ ու դարդեն  
Իրան կորցրել, մարել եր արդեն:  
Զուր անցան ջանքերն են կանանց պառավ  
Շատ չարչալվելին, բայց բան չ'դառավ...  
Շողերը մի հետ  
Դարձել եր չոր վիետ:  
Տեսնելով, վոր հարսն ուշքի չի գալի  
Բայ-բույով փեսի տունն են քաշ տալի:

Գեղը բռնել ե սուզ ու շիվանը  
Մարտնչում են դեռ ջահել-ջիվանը.  
Գնդակը կարմիր թոշում ե ողում,

Առւրը շողշողուն արյուն ե վոթում...  
 Բայց շտա չ'աևեց մարտն ախհավասար,  
 Յերբ իրար խառնվեց հառաչը հազար,  
 Բոշենց տղեքը արնոտ ու ջարդված  
 Նահանջի ճամբեն բոնեցին պարտված...  
 Համբոն եր մենակ, վոր ճակատը բաց,  
 Գլխից վիրավոր, դեմքը արնոտած:  
 Խանչալը ձեռին հարձակվում եր դեռ,  
 Վրա յեր քշում, վոր փեսին մորթեր...  
 Բայց ահա շողաց մի սուր թիկունքից.  
 Նա յերկրորդ հարվածն ստացավ քունքից  
 Տղան որորվեց, շշմեց ու դողաց,  
 Արնոտ խանչալը ձեռիցը սողաց...  
 Չորս հոգի հասան, կապեցին թեր,  
 Մոր գլխին բերին սուզն ու սեր:  
 Հետո պահակներն ընկան ծակ ու ծուլք  
 Քանդեցին ամեն անկյուններ ծածուկ  
 Համբոյի նեցուկ-թիկունքին բոլոր,  
 Վորին կիսամեռ, վորին վիրավոր,  
 Դրկեցին քաղաք՝ կապած ձեռ ու վոտ,  
 Գլխավոր աղի, նաշանիկի մոտ...

Հետեյալ որը նորից հանդեսով  
 Պասկ կայացավ որենք ու ծեսով  
 Յեվ աղեն հասավ իր նպատակին...  
 Իսկ հարսը ախը շրթունքի տակին

Աչքը միշտ լացի, մորմոքը սրտում,  
 Մաշում եր ումբը տիսուր ու տրտում:  
 Տարիներ անցան: Յեվ ամեն գարուն,  
 Յերբ դաշտն եր ծածկվում նորաբույս խո-  
 տով  
 Ծառերը զուգվում ծաղկունքով սիրուն  
 Յեվ կաքավն յերգում սարից կարոտով,  
 Շողերն հիշում եր են յերանելի  
 Գանրունն ու թագուն յերգելեն լալի  
 Մեռնեմ նոր ծլած խոտին,  
 Ծառ ու ծաղկունքի հոտին  
 Ախ, երնեկ եր են որը...  
 Քչքչան առվի մոտին...  
 Զան, ինչ ունուշ եր սերը...  
 Մեռնի իմ բախտի տերը,  
 Զահել ումբս սեացավ,  
 Պարտական ա իմ մերը:  
 Միրտա միջից կես արին,  
 Զիգյարս սուգ ու արին,  
 Ես ինչ զուլում որենք ա  
 Յարը չեն տալի յարին  
 Ա՛խ, սիրածն ուրիշ բան ա.  
 Մեղք ու շաքարն ի՞նչ բան ա  
 Վոր սերը սրտովն ըլի,  
 Աշխարհի մալն ի՞նչ բան ա...

Ակն ու ակունք են թափում,  
Զահելին խասով խաբում  
Աև ըլի վոսկե թասը,  
Վոր միջն արցունք եմ չափում...

VI

Ու մի որ հանկարծ շուռ անցավ գեղը,  
Կորան մտրակի տերերը բոլոր,  
Ընկերներն յեկան հների տեղը,  
Շունչ տվին խեղճին ձնշված ու մոլոր  
Հարուստի աչքի յեղն են առել,  
Ել իշխան կարա ձեն ու ձուն հանի,  
Սարդիս աղին հո երել են վառել,  
Նա կուչ ե յեկել մի բուռը դառել...<sup>1)</sup>)  
Նրա են նախկին չորան-մշակը,  
Խելառ Խաչիկը, տկլոր Արշակը,  
«Վորտեղ մի սոված, վորտեղ մի զյադա»  
Դառել են գեղին տեր ու քեթխուզա»  
Բոշենց տղեքը առաջ են հիմի,  
Ասլան են դառել ամենքը մի-մի  
Չորս-հինգ կոմսոմոլ կա նրանց ցեղում.  
Համբոն բջիջի անդամ ե գեղում:  
Մարդիկ շեղվել են աստծու ճամբից,  
Ռւրացել են ժամ, խաչավետարան,

<sup>1)</sup>) Դեպքը վերաբերում է սաղմական կոմմունիզմի շրջանին:

Ել ձեռ չեն քաշում տերտեր ու համփից,  
Չոքել են բգին, խեղդում անպարան:  
Ով ունի շատ հող, բոլ տավար ու հաց,  
Զեռաց խլում են, տալիս անձարին,  
«Չուր բան ա, արդար որենքը գնաց»  
Իշխանաց սրտով անցնում ե արին:

Սարգսի բերանն ել խոսք չի գալի:  
Խանութը գնաց, հեչ դառավ փողը,  
Բանկի գումարներն ենտեղ չեն տալի,  
Եստեղ խլել են ամբարն ու հողը...  
Ծալքերով փափուկ անկողինը խաս,  
Քրգի կարպետներ, խորասան-խալի,  
Ցրվեցին, տարան շալակով դաս-դաս.  
Յեվ աղեն ջարդվում, ծեծկվում ե լալի...

Ու մեկ ել յեկան, թե՝ որը եսոր,  
Պիտի դատարկես տունդ մինչ կեսոր,  
Վոր շինենք ակումք ու ընթերցարան,  
Թե՝ դու պիտ գտնես մի նոր կացարան...

Աղեն շուտ վազեց նախագահի մոտ,  
Յերկար աղերսեց, ընկավ ձեռ ու վոտ,  
Պաղատեց թողնել մի աչքը գոնե,  
Վոր ինքը ենտեղ որ-ապրուստ անե:

Խնդիրը հարգվեց:  
Յեվ այնուհետև Սարգսենց տունը

Դարձավ մշտական ժողովատեղի.  
Կտրել են մարդի դադարն ու քունը.  
Ճրպրտան ջահել-ջուհուլը գեղի:

Գալիս են քաղքից տղամարդ ու կին  
Ենակես դիմադարձ ճառեր են տսում,  
Հակառակ հնոց որենք ու վարքին.  
Ժամ ու տերտերին բերում են ցասում...

Գոչում են, թե՝ ցարդ խեղճ ու աղքատին  
Տանջել են, վառել գեղի տերերը,  
Հիմի իրանք են ընկել մեր դատին,  
Պիտ լացացնենք նրանց մերերը:

Մի որ ժողվեցին գեղի աղջիկ-կին  
Թե՝ բոլ ա մնաք ստրուկ ու գերի,  
Ապրեք վոնց կուզի ձեր սիրտն ու հոգին  
Յեվ վոչ թե ինչպես կույր բախտը բերի...  
Թե մեր որենքում բռնություն չկա.  
Ամեն վոք ինքն ե ընտրում ամուսին,  
Խոսքի, թե ուզի սիրտը աղջկա,  
Մեկին կթողնի, կառնի մյուսին:

Փակ գոան ձեղքից լոռում ե աղեն  
Ես խրատները քրաինք ու քափով...  
Կինը ներսն եր. նա դողաց վախեն  
Ու դոան ծակից նայեց սարսափով.

Շողերի գեմքը փայլում եր լույսով  
Շարմաղ շուրթերին՝ պսակ ժպտեղեն,  
Սիրուն աչքերը վառվաւմ ին հույսով:

Սարգիսը ցնցվում, թռչում է տեղեն,  
Տեսնում ե, վոր դա նամուսի բան չի,  
Ուզում ե մի կերպ կնոջը դանչի,  
Բայց գե վոնց կարա... Հեվքը պահելով,  
Մնում ե դռան ձեղքից նայելով,  
Տեսնում ե՝ կինը ժպիտը դեմքին  
Թագուն հայացքը աշ թեքեց կամաց,  
Ուր Բոշենց Համբոն կանգնել եր շեմքին,  
Աչքը սիրածի յերեսին գամած:

Ու յերբ փարվեցին յերկու ակնարկներն,  
Հայացքները ցած ընկան ամոթից,  
Դեմքերին վոնց վոր կարմիր կրակներ,  
Արյուն եր ծորում ականջակոթից...

Ժողովից հետո, յերբ կինն յեկավ տուն  
Սարգիսն սկսեց՝ ե՛, խանում խաթուն,  
Եղ յե՞րբ զարգացար, գնում ես ժողով...  
Հը, վոնց ա, կարաս ճրագի շողով  
Աչքունքով անել տղեքին ջահել...  
Հա, գիտեմ, գիտեմ, իշտահ ես պահել,  
Բայց... մեղք ես, խղճա քո ջանին ջիվան  
Թե չե կըերեմ ենակես սուք, շիվան,  
Վոր չես մոռանա մինչ մահ ու մեռդ...  
Զգույշ, արունքից յետ քաշի ձեռդ...  
Յես դաղված մարդ եմ, սիրտս վիրավոր,  
Կուրծքս լիքն արին, խոցեր բյուրավոր...

Արևն իմ աչքին սկին ա տալի.  
Զիգյարս անվերջ կսկծում, լոլի.  
Վոչ ա վոր դու յել միտքդ փոխեցիր,  
Բայց չե... չես կարա... տես, կին, վախեցիր...

Յեվ նրա աչքերն այնպես կատաղած  
Վազեցին դես-դեն վայրենի փայլով,  
Վոր կինը սպոեց, սարսափից դողաց  
Ու քիչ յետ քաշվեց յերերուն քայլով:  
— Զաթի են զլխից հենց չար եր վոտդ,  
Սևանար ճամփեղ,  
Արունն ու սուքը տուն բերիր հետդ.  
Դու յեկար-չեկար, մեռնի քո բախտը,  
Շուռ անցավ Ասլան Նիկոլի թախտը,  
Յերկիրը շուն ու գելերին մնաց,  
Առաջվա պատիվս ու փառքս կնաց...

Հերվանից դեսն ել, հո, վոնց են ասում,  
Բջերն են որը մի պատիժ. ցասում  
Բերում իմ զլխին... ել ի՞նչս թողին,  
Յերկնքից առան զարկեցին հողին.  
Յես կենդանի չեմ, մեռած եմ տեղով,  
Թող կնիկ, երվեմ, վառվեմ իմ յեղով,  
Թե չե... զայրացա, Քրիստոսը վկա,  
Ել քեզ պրծնելիք, փրկություն չ'կա,  
Սուրը Զիգյարիդ միջին կցցեմ,  
Արյունդ բոնով տաք—տաք կ'ծծեմ,  
Ել կերթաս ժողով...—

Գոչեց նա դողով  
Յեվ խորունկ բնից աչքերը մանր:  
Բեվեռեց կնոջն՝ հեվալով ծանր:

Շողերը սպուած՝ կպել եր պատից.  
Նա կուզեր մի կերպ, քչից թե շատից  
Պաշտպանել իրան, լեզուն չեր զորում,  
Եղպես կապնված չ'կար իր որում...  
Վերջը ինչ զոռով խեղճը կըմկմաց  
Դողդողջուն ձայնով ու լացակամած,  
Թե՝ քաղքից եկած են կինն անառակ  
Ուժով եր տարել, կամքին հակառակ:  
Ու հեծկլտանքը պոկվում ե թոքը,  
Ազի արցունքը լցվում ե զոգը:

Մարդը մեզմացավ:—Բաս, մեռնել կա հա,  
Լիրք կնկա վերջը եղպես ա, ահա.  
Սարգիսն եմ, զիտես, ինձ լավ ճանաչի...  
Դե արի չոքի ու ձեռս պաշի:

Յեվ կինը՝ պահած զզվանքը ներքին,  
Խոնար կռացավ ամուսնու ձեռքին:

Ժողովից դեսը հին սիրո շոգին  
Վառում եր կասես Շողերի հոգին.  
Ինչ վոր անվորոշ զզացում քաղցր  
Բաղիսում եր սրտի դոները բարձր:  
Յեվ որ ու զիշեր կինը դեռատի

Եի սենյակումը՝ հետվից պատի  
 Լսում եր յարի անուշ բարբառը  
 Կըլկան տաղը, զրույցն ու ձառը:  
     Ու կարոտ սիրտը մաշվելով սիրուց,  
 Հալվում եր դանդաղ, մեղրամոմի պես.  
 Կինը դողեգող խնդրում եր Տիրուց  
 Կամք, համբերություն, ուժ բերի ենպես  
 Վոր զգացմունքից հոգին չ'պարտվի,  
 Սեփակոր սիրտը մեկ ել նոր ջարդվի.  
 Թե չե, ի՞նչ կասեն ծնող, ամուսին.  
 Աշխար կ'կիտվի, թքի նամուսին...

## VII

Հարկ են պահանջում համփեքից զեղի  
 Յերեք որվա մեջ հիսուն փութ ցորեն.  
 Ել ձեռ չեն քաշում. լծել են նեղի  
 Թե՛ հոգին խորն ա, թող հանեն, բերեն.  
     — Եսենց ել պատիժ, եսքան զուլում դարդ  
 Թանթորաց աղեն  
     — Ես ու են զեզում հրեն հազար մարդ  
 Հաց են փոխ տարել բեռնով ու սելով,  
 Մարդի բերան ել թափվեց ուզելով...  
 Բալշեիլն եկավ դե հիմի ել սկ  
 Առածը կ'տա... սգով ու սեվով...  
 Ես թվիս սկ ա տալացուկին տեր.

Ա՛խ, Նիկոլն ըլեր... Սարգիսը գիտեր,  
 Կաշի քերթելով, թե վոնց կ'կիտեր:

Իբրե թե աղեն ընկել ե նեղին,  
 Ունեցող չկա զոնե իր զեղին,  
 Վոր փոխ առնի տա, հոգին աղատի,  
 Ասի՛ «անխղճին Տերը թող դատի»:  
     Զին ել են իլել, թե կորչեր սարը,  
 Փոխ առներ բերեր, գլուխը քարը...

Յեկ Սարգիս աղեն՝ ճարը կտրված,  
 Քիչ վոսկի առավ, վառված ու երված  
 Ընկավ զեղեց-գեղ, քաշ զալեն վոտով,  
 Մի կերպ հաց ճարի, տուրքը տա շուտով,  
 «Թե չե անաստված, անխիղճ Հեղկոմը  
 Զեռաց կ'բոնի, կ'կոխի գոմը»:

Շողերն եղ որը մենակ եր տանը:  
 Պահապան կարգված են հացթուխ նանը  
 Իրեկնեց թողեց, իր ցավին դնաց:  
 Քրոջը պաշտպան մին Սաթոն մնաց:  
 Դե նա ել ի՞նչ եր, տասչորս տարեկան  
 Չարքաշ յերեխա: Ցորեկն որեկան  
 Ենքան եր վազում, տուն-այգի անում<sup>1</sup>),  
 Վոր արեի հետ խմբում եր քնում:

<sup>1)</sup> Տանից այգին և այգուց տուն գնում:

Ամեն իրիկուն ձեն ու ձուն կ'զար:  
Եղ որն ակռւմբում ել ժողով չ'կար,  
Մենակ համբոն եր դատարկ գահիճում  
Մի թղթի վրա գրում ու ջնջում:  
Ու տաղը անուշ պապակ շուրթերից  
Ծորում եր մեղմիվ, քաղցր դողանջում՝  
«Գարունն յեկավ, կանաչ բուսեց  
Ծաղկունք պատեց թիերին  
Ես ինչ անբախտ, չար սեր հյուսեց  
Զիվան սրտիտ իմ փերին  
Լեզուս պապակ, աչքս կարոտ,  
Զահել ումբս մաշեցի  
Սիրուս ճամբեն փորթ եր, քարոտ  
Սարով ցավեր քաշեցի:  
Արև ծագեց, ել կապ չ'կա  
Երփող սրտերին դալար  
Տեսնես ինձ ել մի շող կ'զա  
Թե պիտ հալվեմ միալար»...  
Լսում ե Շողերն անուշ տաղը են,  
Աչքը արցունքում, սիրտը՝ ալեկոծ:  
«Բա վոր իմանա ալեփոր աղեն...  
Բա գեղն ի՞նչ կասի, չե՞ն անի քարկոծ»...  
Նա ուշը ցրիվ ու միտքը մոլոր՝  
Մին ուզեց բանալ պոռւնկը պապակ,  
Տաղի մեջ պատմել դարդերը բոլոր  
Ու ցույց տալ իրա սիրտը անապակ...  
Բայց... ի՞նչ իմանաս, ասելու բան չի,

Դուցե յարի մոտ ուրիշ մարդ ել կա.  
Վանց կարա սերը հաղի մեջ կանչի,  
Սուր շողացնել, գլուխ ջարդել կա...

Յեվ անձար կինը ձեռները խաչեց,  
Շինքը թեքած խորունկ հառաչեց  
Ու գլուխն անբաղդ լուռ որորելեն  
Դառը մըմունջը կուլ տվեց լալեն:

Հատակին փոված՝ ննջում եր Սաթոն,  
Տիրուհու գողին մըոմուռմ կատուն  
Յեվ աղոտ լույսը ճրագի պստիկ  
Անվերջ ճարճատում, դողալեն սաստիկ:

Դուռը տկտկաց զգույշ ու կամաց  
Շողերը ցնցվեց, սրբեց աչքը թաց,  
Գողաց մի տեսակ ու վոտքի յելավ,  
Բայց մի քայլ շարած՝ խելքամաղ ելավ...

Դուան նեղ ծերպից փայլում են ծանոթ  
Յերկու թուխ աչեր, վոր ձգում են մոտ  
Շղթայով աննյութ, մազնիտով անտես...  
Կինը կիսամեռ հալվում ե կասես:

— Բարի իրիկուն, հին ընկեր, Շողեր—  
Զսպելով ներքին հույզերն ու դողեր,  
Խոսում ե Համբոն, կանգնելով շեմքին,  
Կրակը սրտում, բոցերը դեմքին:

— Մի քիչ սառը ջուր...  
Երփում եմ ծարավ, մի կում, մի պուջուր...—  
Ու կայծակ աչից նետեր ե ցայտում

Յեվ մատաղ կնոջ կուրծքը սրասում:  
 Հարսն իղուր փորձեց թագցնել սերը.  
 Իրան հավաքեց, իբր բան չ'կա,  
 Պատիցը պոկվեց, լարեց ուժերը,  
 Բայց վորտեղ... թույլ են վոտներն աղջկաւ  
 Նա որորվելեն առավ լի թասը  
 Ու մեկնեց յարին աշքերը կախած,  
 Բայց ձեռի դողից ջրի մեծ մասը  
 Թափվեց հատակին. և հարսն ամոթիսած  
 Յերեսը թեքեց, ուղելով պահել  
 Հուզմունքը դեմքի յարից են ջահել:  
 Ծարավը ծծեց թասը մինչև տակ  
 Ու յետ մեկնելով ամանը դարդակ  
 Շնչաց կամաց՝  
 — Ոխայ, ինչ սառն եր, ինչ անուշ ջուրդ...  
 Բա... յերբ կ'հանես սրտիցս սուրդ...

Շողերի ձեռից թասն ընկավ գետին.  
 Նա ճշաց թեթև ու հենվեց պատին:  
 Տէր Աստված, ինչու շշմեց գլուխը.  
 Սիրտը քցում ե, թրպրտում ենպես...  
 Աշքերը կոխեց մըմն ու ծուխը  
 Ու խառնվեցին մտքերը պես-պես:  
 Յեվ են ալեկոծ կրծքի տակ ջիվան  
 Կոիվ ե արդեն, պայքար կատաղի,  
 Մի կողմը խնդում, մյուսում շիվան...  
 Նամուսն ե կանչում միջիցը վախի:

— Քո ծիծը ծակվի, աղջի, սկերես,  
 Զէ ժամապսակ դու մարդու տեր ես,  
 Բա վոնց ես հոգիդ ծախ տալի դիմին,  
 Վայելքն ի՞նչ բան ա, սգին ու սկին...  
 Դու նամուս պահի, պատիվ ու ամոթ,  
 Վոր միշտ պարզերես լինես մարդիդ մոտ,  
 Մեղք ես, մի անի, տես, թեթև շեղում  
 Մեծ թքելատեղ կըլնես սաղ գեղում...  
 Մի այլ զնգան ձայն ավելի բարձր  
 Վրա յե տալիս ու կանչում քաղցր՝  
 — Դու մի հավատա պառավ սատանին,  
 Վրա դարն անցավ,  
 Որը սեացավ,  
 Հիմի յեկել ա վոտը պատանին  
 Անատամ բերնից խրատ ա թափում...  
 Զե, դա սուտ ա, սուտ, ջահել ա խաբում...  
 Թքած անվայելք դատարկ նամուսին.  
 Մարալ ու ջիվան, գեղանի կույսին  
 Խի պիտ ալեվոր հարուստը տիրի,  
 Հրեշտակն ինչու պիտ դառնա գերի,  
 Կամ ինչու պիտի եղ սիրտդ մատաղ  
 Անիծված վարքին տաս զոհ ու մատաղ  
 Խի կոկոն կուրծքդ թոշնի անտեղի,  
 Կարմիր որդ ըլի աղի ու լեղի...

Շողերը բացեց կոպերը կամաց...  
Համբոն եր դեմք՝ հայացքի բոցը  
Մեղքամիտ կնոջ աչքերին գամած:  
Ու ձեռը սողաց սիրուհու ծոցը...  
  
Կինը նախ ցնցվեց, սարսափից ճշաց,  
Ապա մոլեզին թափով մոնչաց  
Յեվ փարվեց կարոտ ու փափակ յարին...  
Նա՝ մոռցած նամուսն, աչքերում արին,  
Կուրծքը պինդ կրծքին այնպես ե թափով,  
Սեղմում ու ճմլում կրակ ու քափով,  
Վոր կասես հալչել, ձուլվել ե ուզում  
Սիրածի հոգու են վարար հույզում...

Փոթորիկն ահեղ ալեկոծում ե  
Սիրատանջ զույգի սիրտը միալար  
Ու համբույրը ջերմ անվերջ ոծում ե  
Վառվող շուրթերն ու այտերը դալար...

#### VIII

Հաջորդ առավոտ ջուրը գնալիս,  
Հարսները իրար նոր լուր ին տալիս,  
Թե՛ են քրքրված Շողերը փախել  
Պատիվնամուսը գետինն ե կոխել  
Ու փշկել Բոշենց Համբոյի տանը...  
Անիծեց վառված Հերիքնազ նանը:  
— Ես ինչ խայտառակ վարք բցեց գեղը

Այս, դուն մարթեա, տ' զն ա տ' զը...  
— Ո՞վ գիտի, զուցե զոռով են տարել  
Զեռ ու վոտ կապել, սուր ու թուր արել  
Թե չե Շողերը...— Խունջիկ ու մունջիկ  
Խոսեց կարմրաթուշ մի սիրուն աղջիկ:  
— Զե, վոչ ես, վոչ են, հոգի միք սիի,—  
Ասում ե մեկը շարքիցն յետեկի,  
Հենց ինքն ա փախել, գլխին ինչ քար-տար,  
Աղջիկը ջահել, մարդը՝ ծեր, քավթառ.  
Ես բանի միջին մերն ա պարտական.  
Մինչև յըեթ տանջվեր խեղճը որական...  
Հերիքնազ նանը փրփրեց իսկույն.  
— Եդ վոր լիրքն եր, Սարդարի իսկուն,  
Գետինը մանես, պապանձվի լեզուդ,  
Դու հո անամոթ, անզգամ ես զուտ,  
Լավ ես խրատում մեր ջահելներին,  
Ետենցով աշխարն ես որին բերին...  
Եզուց-մեկել որ նայեն մեկ-մեկի,  
Տես ինչ սկ արև գեղին կ' ծեղի...—

Յեվ դրա նման թեր ու դեմ վեճեր,  
Ինչքան վոր ասես. անեծքն անվերջ եր:

Ամենից սաստիկ գաղազած եյին  
Հին իշխանները և կանայք պառավ,  
Զեռներիցը գար կրակ կածեյին  
Են լրեի գլխին, վոր պատճառ դառավ

Ու իրանց գեղի բարձր անունը  
Գետնովը տվեց, շինեց հող մոխիր,  
Վոր քանդեց ջահել-ջիվանի տունը:  
— Որենք ես, բռնի ջխտին ել կախի,  
Վոր պատիժն ըլի դատաստան հախի,  
Մենք ենք մի նամուս. են ել վոր չրի,  
Ել մարդ ինչի՞ յա ապրում աշխարքում.  
Մի հետ մեծ-պուճուր, հնաց լամ են կըլի,  
Կուռ բռնենք, կորչենք Արագի խորքում:

Սև սուգ ե մտել ոջաղն Ավետենց.

Յավող բարեկամ, ազգ ու ազգական  
Լցվել են սունը, թե բա վո՞նց ետենց  
Խեղճ, անբախտ մարդիկ փորձանքի յեկան։  
Մին ասում ե, թե՝ թըլիսմ են արել,  
Կամ խելքից հանել զիր ու դրբացով,  
Մին ել, թե՝ զոռով են քաշել տարել,  
Խանչալի ուժով, շիվան ու լացով։  
Վոչ մեկի սրտում մի կասկած չկա,  
Թե միտքը փոխված լինի աղջկա.  
«Հարամ-կաթնակեր, ժառանդ աննամուս  
Դե, լեսենց աղգից յերբ ա յեկել դուս»։  
Ավետն անկենդան, լեզուն կարկամած,  
Հաղիվ նզովք ե մըրմնջում կամաց,  
Մարանը չկա. խմորը թողած,

Նո բասարացից ընկած ե զեզը  
Ամեն ծակ ու ծուկ իսցկվեց, սողաց,  
Մինչև վոր պտավ աղջկա տեղը:  
Իմացավ հունքը ու բունքը բանի.<sup>1)</sup>  
Զարդվեց, թուլացավ իլիկը նանի։  
Ամոթ, նախատինք...  
Պատովես, գետինք...  
Բայց գաղտնիքն ինչպէս զոյս աշխարք

Համուռթատիրին նո վո՞նց կեր անի...  
Ու պատահածին խարեց Մարանը,  
Թե աչքով տեսավ նո են պարանը,  
Վորով ձեռվոտն են կապել խեղճ բալի,  
Թե աղջիկն իրան ջարդում ո, լայի...  
Համուռթատիրին նո վո՞նց կեր անի...

Մարդիկ քոշվել են. Դատարկ ե տունը.  
Մնում են Ավետն ու յերկու սունը,  
Վորոնք սկ մտած, մոմուռը սրտում,  
Լուս չորտցել են, տիսուր ու տրտում։  
— Հը, ինչ կտ, կնիկ, ի սեր Քրիստոնի—  
Կինը զալուն պես զոչեց Ավետը  
Ու փորձեց կանգնել, տոնելով վետր։  
— Ել մի պապանձվի, մորթեցիր, խոսի,  
Տեսնեմ ինչ զուլում, ինչ կրոկ եր ես,  
Խոսի, շուտ տոտ, բոլ ու ինձ երես...  
1) Գործի գաղտնիքը։

— Են որը պիտի երվեր քո ջանը,  
Դոր յետ չտայիր բերած նշանը...  
Հազար ասեցի, թե սիպտակամազ,  
Գողնած շանը քորփես չի գա սազ.  
Մեռա գոռալեն, թե ջահեն ա լավ,  
Չկարցա կողքդ գետնովը տայի,  
Գիտեյիր՝ փեսեղ վոր հարուստ ելավ,  
Քեզ պիտի փունջ-փունջ վարդի մեջ պահի...  
Դե հիմի քաշի, կեր փրթած թանդ.  
Գեղով թքում են ոչաղիդ, տանդ...

— Այ, կնիկ, բնի ա ել սևես հոգիդ,  
Թարգը տուր, թափի եդ քարը գոգիդ.<sup>1)</sup>  
Մենակ են տսա, թե անզգամը  
Ինքն ա վեր կացել կորել իր վոտով,  
Թե փաթաթել են կոները ծամը,  
Զոռով փախցրել, տուր ու ճիպոտով...

— Դու չես իմանում քո բռնած բանը...  
Յես մեղ չեմ դնի խեղճ աղջկանը,  
Հողեմ զլուխը ալեվոր մարդի,  
Թե քիչ սիրտ չուներ կնիկը զաթի,  
Քիչ ել զոռել են, քաշքշել, ձգել,  
(Դե զիտես ելի, Բոշենց ազգը շուն),  
Ու քեզ պես զարշ հոր նամուսին թքել  
Փախցրել, տարել, կոխել իրանց տուն:

<sup>1)</sup> Թող չարությունդ:

Կիտվել են արդեն իշխանները հին  
Ժամի առջեկ բակը ընդարձակ,  
Գոռում են, գոչում, հայհոյում մի-մին,  
Նզովում Բոշենց ցեղը սանձարձակ:  
— ՏԵՐ, դու վողորմաս, ես ել մի ցասում.—  
Աչքը յերկնքին՝ Մուղսին ե խոսում.  
— Ասենք տեսել ինք շատ կրակ ու ցավ,  
Բայց ես մինն եկավ, բոլորից անցավ:  
— Ախպեր, ի՞նչ կրակ, զուրմւմ ա զուրմւմ,—  
Տիրացու Տրդատն ե ձենը զլում:  
— Ես ապրանք հո չի, վոր քաշեն, հանեն  
Ասենք՝ ջիանդամ, տանում են, տանեն...  
Նամուս ա, նամուս...  
Դժար ա, հոգիս, նամուսի բանը.  
Զասեք՝ թող դուրս գա Սարգսի ջանը  
Եսոր նրանն են փախցրել, խոսքի,  
Եգուց մեր ջանին կ'զա կրակը,  
Ու ոչով ձեզնից թող չասի սկի  
Թե կարա զլխին պահի գդակը.  
— Հիմի թող ասեն եսքան մարդիկը,—  
Գոչում ե բարձր Քյոխվա Վարդիկը,  
— Վոնց դատավոր եմ ելել ութ տարի,  
Վոր դաշտ ու ձորում. սարի թե քարի  
Չտեսաք եսպես մի խայտառակ բան,

Դե ասեք, վորի՞դ ջահելին դիպան...

Մի տարի չ'կամ, այ, տեսէք ահա.

Գեղ կառավարելն եսենց բան ա, հա...

— Բան ասեց, այ մարդ, են մեր այսմին  
Մեծ ու պուճուր կար, իշխան ու մզգուր,—  
Մեջ ընկավ տաք-տաք Սաղաթել ամին,  
— Ել որենք ու վարք չ'կա, թարգը տուր,  
Զուր ա, քար ընկավ մեր գլխին պրծավ.  
Մի կենտ նամուս կար, են ել ջուրն անցավ:

Յեվ տրտունջն եղակես կը քաշեր յերկար,

Թե վոր տերտերից առաջարկ չ'գար:

— Բոլ ա, որթնածներ, ել քանի՞, քանի՞

Դարդակ թոնթորաք, թե կարաք անի,

Թե տղամարդ եք ու նամուսի տեր,

Դե գեղ-գեղովի դուք ջահել ու ծեր

Թափիվեցեք քաղաք բորիկ, գլխաբաց,

Դիմեցեք մեծին խոսքերով չափած,

Ասեք—որենքը թող ապրած կենա,

Մեր գեղը հրեն կործանվեց են ա,

Զեր ես բջերը անառակ ու վատ,

Վոչ ժամ են թողել, վոչ հոգի-հավատ.

Ես ու ել կնիկն են մարդից խլում.—

Ու պատմեք, թե վոնց ցասում ու զուլում

Բերին մեր գլխին անցկացած գիշեր,

Ասեք՝ արածներն իբրև թե քիչ եր,

Հիմի յել ձեռք են մեկնում նամուսի,

Ասեք՝ ետենց չի որենքն Հիսուսի,

Եկեք ձեր մարդկանց Ջիլավը քաշեք...

Բոլ ա տնկրակ մեզ երեք, խաշեք...

— Փառավոր մնա, շատ լավ խրատ ա

— Խելնք ա խոսում, ճարը հենց եղ ա

— Բա, ես նամուս ա, հանաք բան հո չի

Թե գանգատ չեթանք, ազգը կ'կորչի:

Յեվ գեղը պոկվեց, մեծ մարդ չ'մնաց  
Վոր թափիվեց քաղաք, բողոքի գնաց:

Քննիչը յեկավ են մեկել որը:

Հարց ու փորձ արեց աղջկա հորը,

Վորն իրան ջարդում, յերդվում եր տաք-տաք,

Մոթալ փափախը գետնովը տալեն,

Թե Բոշենք կիտվել, առել թրի տակ

Ու փախցրել են իր բալին լալեն:

— Դու ինքդ դատի, խնդրեմ, մեծ հընդեր,

Իմ ազգ ու տակում հարամ-կաթնակեր,

Աննամուս խիզան թե մեկը ճարես,

Իրավունք ունես մեզ շշի շարես.

Իսկ թե չե, Բոշենց են կոտորվածքին,

Նրանց անպատկառ, անամոթ ազգին

Սիրիր կ'քշես անով ու տեղով,

Վոր սիրտս պատի ոխտը թիզ յեղով:—

Բայց ծամծմում ե լեզուն Մարանը,

Պատասխան տալիս ենպես, կաց ու կամ,  
 Դե, նա լավ գիտի ինչումն ե բանը...  
 Մեղքն աղջկանն ե իրա անզգամ...  
 — Ախար, ի՞նչ ասեմ, դատավորն ապրի,  
 Շիտակ ա, մի քիչ մեծ եր ամուսին,  
 Բայց... դե իր կամքով, առանց սուր-թրի  
 Վո՞նց կարար փախչեր, թքեր նամուսին...  
 Սարգիսն ել յերդվում, ընկնում եր կրակ,  
 Շողերի անկեղծ սերը հաստատում,  
 Անիծում Բոշենց, վոր ես խայտառակ  
 Արարքով կինը մարդուց են զատում:

Թեև պարզվել եր գործը տակվետակ,  
 Շողերն ու Համբոն պատմել ին արդեն,  
 Իրանց նշանը ու են սերը տաք,  
 Դառը տանջանքը հորն ու մոր դարդեն,  
 Բայց չեն հավատում ծերերը գեղի  
 — Զուր ա, մի խարի դու մեզ անտեղի,  
 Աղջիկն եղպես բան չի ասի սկի,  
 Թե ինքը լիրք ա, աննամուս, խոսքի.  
 Իցե, թե Բոշենք լինեն ստիպած,  
 Կամ վախից քամի, բան լինի դիպած...<sup>1)</sup>  
 Թե կուզես լսել արդարը բանի,  
 Հարսին դուրս կանչի, գեղամեջ հանի  
 Ու թող նա պատմի ինքն իր բերանով,

<sup>1)</sup> Խելագարված:

Տես վո՞նց են կապել նրան պարանով  
 Բոշենց բջերը, քաշ տվել, տարել,  
 Ութ-ինը հոգով խայտառակ արել—  
 Քննիչը գտավ, վոր կ'լիներ տեղին  
 Այս արդար գործը ցույց տալ վողջ գեղին—  
 Դա գուցե բանա աչքը ամբոխի,  
 Յեվ նա իր սխալ ընթացքը փսխի

X

Կիտվել են արդեն: Հսկա ժողով ե:  
 Կալը լիփի-լեցուն, կենդանի ծով ե:  
 Իսկ շուրջ ու բոլոր, կտուր ու բաշի  
 Կին ու աղջիկներ լցվել թամաշի:  
 Կալի են գլխին, առջեր պատի  
 Պատրաստ ե վաղուց ատյանը դատի՝  
 Խամ-խարատաշեն մի փոքրիք սեղան  
 Իշուկը կողքին:—Այ տա, ի՞նչ յեղան—  
 Անհամբեր ու զուսպ հարցեր են գալի  
 Այս ու այն կողմից ծովածուփ կալի:  
 «Եկան հա, եկան» շշնջաց մեկեն  
 Յեվ ալիք տվեց ամբոխն ահագին.  
 Ու են դիմացի փոքրիկ դոնակից  
 Քննիչը յելավ հեղկոմի բակից:  
 Լուռ ողջույն տվեց, նստեց իշուկին:  
 Իսկույն վերջ ելավ, ծպուտ-շշուկին

Ապա յերկաց դոնակի շեմքին  
 կանացի պատկեր՝ սպուռը գեմքին,  
 չոր թուխ աչքերը վոտներին դամած,  
 թոթիոր սրառում շարժվում եր կամաց:  
 — Աղջաղջի, եկավ, տեսեք, Շողերը...  
 — Շատ պարզերես ա, գլխին հողերը...  
 Փսփսուկն անցավ ծերոց շարքերով,  
 վոր սնված ելին հնաւց բարքերով:  
 — Դեսն արի, քույրիկ, մի քաշի ամոթ,  
 Համեցեք նստի, ես սեղանի մոտ:—  
 Բայց վոնց... իսկ գեղը, իսկ կանայք պառավ...  
 Նա մի յերկու քայլ քաշվեց դեպի յետ,  
 Զեռները խաչեց, ու արձան դառավ  
 Սեղանի դիմաց, բարձր պատի հետ:  
 Շողերի յետնուց դուրս յեկան բակից  
 Մի խումբ ջահելներ իրար քամակից,  
 Վոմանք շարվեցին շուրջը սեղանի,  
 Վոմանք՝ կողքերին հարսի գեղանի:  
 Ելի տատանվեց շարքը ծերերի,  
 Խուլ շշուկ անցավ բերանից-բերան,  
 Ճերմակ գլուխներն ընկան որորի,  
 Հին իշխանները լուռ իրանց կերան:  
 Մուղսին քիչ առաջ անցավ կուրծքը բաց,  
 Փափախը հանեց ու խոսեց կամաց.  
 — Հընդեր ջան, խնդիրք ունենք քեղանից,  
 Դու կաց ու հարսը եղ սեղանի մոտ,

Ել վոչ ով չըլի բացի ձեզանից,  
 Դե, եստեղ գեղ ա, մեր վարքին՝ ամոթ...  
 Այդպես ել եղավ: Բջիջը խմբով  
 Քաշվեց դեպի ցած աջ կողքի թմբով:  
 Քննիչը յելավ: ամբոխը լոեց  
 Ու հազար աչքեր են կողմը չոեց:  
 — Ընկերներ, անցյալ որը ծեր գեղում  
 Մի դեպք ե յեղել, հակառակ բարքին.  
 Դա ամոթ բան չի լուսավոր տեղում,  
 Մենակ թե խորթ ե ծեր վարք ու կարգին:  
 Բայց ծեր ագաթում մի շատ վատ բան կա-  
 Ամեն նիստ ու կաց խոսքով ահելի,  
 Մինչև պսակին տղի-աղջկա  
 Ել չեք հարցնում սրտին ջահելի:  
 Ծնողը ընտրեց, զավակն ե գերի,  
 Պիտի յենթարկվի կամքիե մեծերի.  
 Բայց, դե, շատ անգամ հաշիվը հոր-մոր  
 Ջահելի սրտին չի գալի հարմար:  
 Հեռուն գնալու ել կարիք չկա,  
 Այ, հենց ես դեպքը. ծնողն աղջկա  
 Յետ ղրկեց սիրած տղի ղրավը,  
 Կտրատեց սիրաը զավակի գերի,  
 (Նրա կարճ խելքով հենց եղ եր լավը),  
 Ու տվեց հարուստ գոզնած ծերի...  
 Յեվ վերջո ես եր... Աղջիկը թշվառ

Երվեց ու տանջվեց ամբողջ վեց տարի,  
Մինչև վոր հասան որերը մեր վառ,  
Շղթան խորտակվեց սիրող սրտերի:  
Սերը ազատվեց. ու խեղճ նահատակ  
Աղջիկը երված՝ ել չ'զիմացավ  
Հոգին մորմոքող ցավին անհատակ,  
Փախավ ծեր մարդից, յարին միացավ...

Նորից ծածանվեց ալիքն ամբոխի,  
Ավետն ուզում ե վոտն առաջ փոխի,  
Ճամբա չի գտնում:—Մուտ ա սուտ, հընդեր,  
Իմ ազգում չկա հարամ-կաթնակեր:—  
Գդակը հանած՝ Սաքոն յերեցփոխ  
Գոշում ե բարձր՝ վոր եղակես ա, թող  
Շողերը խոսի հենց իր բերանով,  
Տեսնենք բա իսի յեն կապել պարանով...  
— Շիտակ ա ասում, պարան կա, պարան...  
— Բոշենց բջերը փախցրին տարան...

Շուրջը տարածվեց աղմուկ, աղաղակ,  
Մեկ-մեկին բրթում, ձգվում են տղաք,  
Վոր իրենք խոսեն ավելի ճարտար  
Դուրս դան, պաշտպանեն դատը եղ արդար:  
Բայց համառ ու խիստ, ատենակալն այն  
Վերջ տվեց վեճին. ել վոչ խոսք, վոչ ձայն:  
Սաստում ե պատժի, բանտի անունով,  
Յեթե չեն շարժվի կարգ ու կանոնով:

Լոռվթյուն տիրեց նորեն վերջապես,  
— եյ, Մուղսի, քանի դու գյուղը խարես,  
Փախցնել չկա. կապ եք պտրտում,  
Այս, կապը կա, բայց... նրանց սրտում:  
Թեև մեզ համար պարզ ե ամեն բան,  
Եստեղ բռնություն սուր ու թուր չ'կա,  
Բայց կատարում եմ ցանկությունը-ձեր,  
Գեղի քեդիսուդեք, ալեոր ու ծեր:  
Արի, քույր Շաղեր, յեկ առաջ, քիչ մոտ,  
Գլուխդ վեր կալ, մի քաշի ամսթ,  
Լեզուդ բաց արա ու պատմիր բոլոր  
Դարդերդ մեկ-մեկ, վոր խեղճ ու մոլոր  
Ամբոխն ես գերի  
Փթած բարքերի՝  
Լսի վերջապես ինքն իր ականջով,  
Վոր ես բանի մեջ բռնություն չկա,  
Տեսնի վոր ձեզնից մեղ չսւնի վոչ ով:  
Վոր չի կարելի ջահել աղջկա  
Մուրազը քանդել,  
Սերը կաշկանդել:  
Դե խոսիր, քույրս, ազատ ու բարձր,  
Թող ծակե ձայնդ սրտերը կարծր:

Բայց հարսը ցամքել, սառել ե տեղում,  
Քթկալի տակին շուրթերն են դողում.  
Վոնց կարա խոսի ծով ամբոխի դեմ,

Են ել աղաթին ու վարքին ընդեմ:  
— Մի լոի, քույրս, ինչու չես խոսում,  
Ժողովուրդն ամբողջ քեզ ե սպասում:

Անցան րոպեներ Ելի մեկ յերկուս,  
Հարսը քարացել ու կանգնել ե սուս.  
Վախեցավ արդյոք նա, թե ամաչեց,  
Բայց զույգ մարդարիտ ընկավ քամ աշից:  
— Ներող իլ հընդեր, — ճառեց Վարդիկը,  
Հարսը չի խոսի ժողովի տեղում,  
Այ, թող վկայեն եսքան մարդիկը.  
Եղաս անսամուս չկա մեր գեղում:  
Իսկ յեթե կուզես իմանալ հաստատ,  
Թե ում վզին ե մեղքը ես բանի,  
Թե լավ քննիչ ես դու, արդարադատ,  
Յերկոսին ել բեր, ու մեյդան հանի.  
Սարգիսը կանգնի հարսին կողեկող,  
Իր հալալ մարդը, պսակն ու թագը,  
Իսկ են սեվերես Բոշի փուչը թող  
Կորչի են դռնով հեղկոմի բակը,  
Նոր են միջոցին մտիկ տուր ու տես.  
Թե հարսը զնաց բաց դռնովը ներս,  
Իմաց կաց՝ ստում, խարում ա գեղը  
Թե անշարժ կանգնի նա տեղն ու տեղը  
Իր մարդի կողքին,  
Են ա զիացի, վոր Բոշենցն ա մեղը...

— Հոժար Ենք, հոժար, — վախախը ձեռին  
Գոչում ե աջից Համբուխն քեռին.  
— Եղաս ել արա, թող ժողովուրդը  
Հենց մեկեն հանի ականջի բուրդը;<sup>1)</sup>  
— Թող եղաս լինի, հոժար Ենք, հոժար, —  
Գոչեց ամբոխը: Ել ինչ կար դժվար:

Սարգիսն ե կանգնած աջ կողմից հարսի  
Նայում ե դեպ ձախ նա աչքի պոչով  
Ու մտածում ե՝ «Բոշենք չեն մարսի,  
Պսակը քանդել չի կարա ոչով»:

Իսկ Համբոն ենտեղ, հեղկոմի բակից  
Թագուն նայում ե պատի նեղ ծակից,  
Ու սիրտն ենպես ե թրպրտում, քցում,  
«Տեսնես Շողերը ինչ ե մտածում...»

— Դե, ասա հիմի դու, քույրիկ Շողեր,  
Ել ինչի յեն պետք արցունք ու դողեր.  
Նորից եմ շեշտում, վոր մեր որենքով  
Սերը ազատ ե.

Մարդին չ'սիրող կնիկն իր կամքով  
Կարող ե թողնել, յերթալ նոր ճամբով:  
Կողքիդ կանգնած ե ամուսինդ հին,  
Իսկ այնտեղ բակում, դռնակի մոտին  
Բոշենց Համբոն ե վաղուց սպասում:  
Վճիռը քոնն ե: Դե, ինչ ես ասում.

<sup>1)</sup>) Փարատե իր կասկածանքը:

Վորոշիր հարցը, հենց հիմի, շնւտ, շնւտ.  
Յեթե սիրում ես ալեօր մարդուդ,  
Մնա նրա մոտ ու ապրեք բարով,  
Ել քեզ մի զցի սարով ու քարով:  
Իսկ յեթե սիրող համբոյի հետ ե,  
Են բակը գնա, այ, ճամբեն եղ ե:

Սառեց, չորացավ ամբոխը հոկա:  
Վոչ վոքի շուրթի ել ծպտուն չկա.  
Ու բյուր հայացքներ բոցով շանթալի  
Հազար աչերից հարսին են գալի:  
«Դե, բոլ ա կարմիր արևոդ մաշվի,  
Քանի... վոսկորին հասավ դանակը,  
Մինչև յերբ հոգիդ վառվի ու խաշվի».  
Նա վոտը փոխեց ու... դեպի բակը...

Փրփրեց իսկույն ճահիճը հոտած,  
Նստողներն ամեն վեր թուան վոտաց.  
Սարսափի միջից իշխաններն ահել  
Թքատեղ արին թե հարսին ջահել  
Ու թե ծնողին նրա խայտառակ,  
Վոր պտղեց եղպես մի լիրք, անառակ...

Դունակի մոտին խումբը բջիջի  
Տոնում ե տարած մեծ հաղթանակը,  
«Ուռա» յե կանչում միջից քրքիջի,  
Վոր Շողերն ահա հասնում ե բակը:

Ավեան հուսաբեկ, աչքերը չոտծ  
Շշմել եր՝ տկար իլիկը ծուծ,  
Քարացել, հեռւմ շարքերում յետի,  
Հենվելով դլխին ծուռ ձեռնափետի  
Ահա նա ցնցվեց ու ձգվեց արագ,  
Մոնչաց, կոեց թույլ մեջքը բարակ  
Յեվ չմթեց գետնից մի կապույտ լիու քար,  
Տարավ ու բերեց բազուկը տկար,  
Առ հա... Շողերի ուղիղ ճակատին ..

Աղջիկը ճշաց ու հենվեց պատին.  
Ել արյուն ցայտեց լայն բերնից վերքի.  
Հարսը՝ հուսահատ շարժումով ձեռքի,  
Պատին քսվելեն սողաց դեպի ցած,  
Սպուռը դեմքին, աչքերը անցած...

Ծովը հառաչեց: Կանայք շանթահար  
Ճիչ ու ծվոցով բոթում են իրար:

Հրճվում են թագուն ծերերը բազում,  
Վորը փախչում ե, վորը մոտ վազում:

«Ոխայ, լավ դատ եր, տեղն ա տեղը,  
Եղ ա աննամուս ջահելի դեղը...»

Քննիչն ու խումբը սառել ին մի պահ,  
Չորացել տեղում, շշմել... Բայց ապա  
Իսկույն սթափիվում, դալիս են ուշի,  
Հարսին վերցնում, դրկում բժշկի  
Ու իրանք ընկած մեջը ամբոխի,

Եիքը ցտումով վրեժ ու վոխի,  
Գարշ հանցավորին գտնել են ջանում,  
Վոր ժողովի մեջ մարդ ե սպանում:

— Եղ ով եր, ասեք, ով քցեց քարը, —  
Քննիչն ե գոչում, — թող դուրս զա չարը.  
Ինչու չեք ասում. խոսեք, այ մարդիկ:  
Այս, դուք սորուկներ, խավարի վորդիք...  
Եյ, վախկոտ հրեշ, չես պահվի, զուր ա...  
Տո մի ձեն հանեք, ինչ եք պապահձիկ:  
Ասեք, մարդասպանն են ով եր, ուր ա:  
Ամենքը լուռ են, շիվար. միալար  
Դես դեն են շրջվում, նայում են իրար.  
Ծփում ե ծովը ալիքով վարար:

Առաջ ե ձզվում ահա Ավետը,  
Ողի մեջ ցցած իր ծուռը փետը.  
Չկա ել ուսի շալը անբաժան,  
Մեջքը շտկվել ե: Ծնողը դաժան  
Կապուտկած շուրթով կրակ ե շնչում,  
Խոր հեքի միջից նզովք շշնջում,  
Ցայտելով աչից շանթեր կայծակի,  
Հասնում ե դստեր արյունը լակի...

— Այ, մարդասպանը, հենց սա յա, վոր կա  
Գոչեց հաղթանդամ մի ջահել հսկա:  
— Յես եմ, յես, լավ տես, Ավետը կեսի,

Հերն անզգամի, գալիս եմ հեսի:  
Յես սպանեցի ժառանգս անտմոթ,  
Վոր թքեց պատվիս ծով ամբոխի մոտ...

Քննիչն ապշել ե: — Անզութ հայր... գազան  
Շուրջը լաց ու կոծ, անեծք բազմազան:  
Ծեր գլուխները զնում են գալի  
Ու մարդասպանին լուռ հավանք տալի:  
— Ես ձեռը զարկեց, Ես, ով ու ծածկում,  
Պինդ կտպեք կուռս... նամուս ա, հընգեր.  
Թող չասի զեղը, թե կեսենց ազգում  
Կա մի անզատկառ հարամ-կաթնակեր:

Նույն որը և յեթ բջիջը զեղի  
Վորոշում հանեց, վոր ել անտեղի  
Չարծարծվի հանուր վրեժի հարցը  
Վոր անհույս բան ե հների դարձը:  
Այլ դրա տեղակ գլուխը ոճի  
Վորոշվեց ջարդել... շենքով դպրոցի:

Այդպես ել յեղավ: Ու չորս տարի անց  
Են արնոտ կալում, հեղկոմի դիմաց  
Բազմած եր հպարտ ոջաղը լույսի,  
Ուր մատաղ ծիլերն ապագա հույսի  
Մատներով դալար, թափով միալար  
Քանդում են փթած կենցաղն ու բարքը  
Յեվ տեղը կերտում կարմիր աշխարքը:

ՎԱՃԱՐՎՈՒՄ ԵՆ


ՀԵՂԻՆԱԿԻ ՀԵՏԵՎՅԱԼ ՅԵՐԿԵՐԸ

1. ԽԱՎԱՐ ԱՇԽԱՐՀՈՒՄ—Պատմվածքների ժողովածու (վերջին որինակները) 2 ռ.
2. ՀԱՐԱՄ - ԿԱԹՈՆԱԿԵՐ ԱՂՋԻԿԸ — Կենցաղապետական նորագույն կյանքից 40 լ.


ՏՊԱԳՐՎՈՒՄ ԵՆ

1. ԶՈՒԼՈՒՄԸ — Կենցաղապետական կյանքից:
2. ԱԶԱՏԱՐԱՐԸ — Կոռպերատիվ պատմվածք, վորուարժանացել և Հայկոսպի գրական մրցանակին:





(204.)



ԳԻՆԸ 40 ԿՈՊ.

Գումարով զնողներին 20% զեղին

Դիմել հեղինակին՝

ՅԵՐԻԱՆ, 11 Սադովայա № 18-